Հայտարարություն

Ջրային կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է Կոմիտեում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 18/1-3.1-2).

Հիմնական գործառույթները.

1) իրականացնում է Կոմիտեի մտից և ելից թղթակցությունների, գրությունների թարգմանության կազմակերպումը հայերենից/ռուսերենից անգլերեն և հակառակը ու այն սահմանված կարգով Կոմիտեի քարտուղարություն ներկայացումը.

2) անհրաժեշտության դեպքում կատարում է բանավոր և գրավոր թարգմանություններ հայերենից/ռուսերենից անգլերեն և հակառակը.

3) պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն՝ ոլորտում գործող վարկային և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ.

4) իրականացնում է Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների և Կոմիտեի համակարգի կազմակերպությունների աշխատակիցների օտարերկրյա գործուղումների համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման աշխատանքները.

5) մասնակցում է Կոմիտեի, Կոմիտեի համակարգի կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների, միջազգային /միջպետական/ միջկառավարական կազմակերպությունների, առաքելությունների, այլ օտարերկրյա կազմակերպությունների մասնագետների հետ կազմակերպված հանդիպումներին և ներկայացնում առաջարկություններ.

6) իրականացնում է համապատասխան վերլուծական, տեղեկությունների հավաքագրման և տվյալների բազայի ստեղծման աշխատանքներ.

7) ըստ անհրաժեշտության ներկայացնում է տեղեկատվություն ինտերնետային ցանցից՝ կապված ջրային տնտեսության ոլորտի տարբեր միջոցառումների և տեղեկատվության հետ.

8) մասնակցում է ջրային տնտեսության ոլորտի հեռանկարային համալիր և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքներին.

9) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է ջրային ոլորտում՝ օտարերկրյա կազմակերպությունների հետ միջազգային սեմինարների, կոնֆերանսների, գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպմանը.

10) մասնակցում է օտարերկրյա պետություններից Կոմիտե ժամանած հյուրերի և պատվիրակությունների հյուրանոցներում տեղավորման խնդիրների իրականացմանը, իսկ անհրաժեշտության դեպքում մասնակցում է նաև նրանց Հայաստանի Հանրապետություն մուտքի-ելքի եզակի կամ բազմակի արտոնագրեր, կացության քարտեր տրամադրելու համար անհրաժեշտ գործընթացների կազմակերպմանը.

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի, <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<<Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի <<Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին ծրագրերի իրականացման միջոցառումների մասին>> N 765 որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն,

տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.

համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ռուսերենին (ազատ) և անգլերենին (ազատ) տիրապետում.

անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2) տիրապետում:

Ժամկետային աշխատանքային պայմանագիրը կնքվում է մինչև ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու հիմքի ավարտը՝ հիմնական աշխատողի երեխայի խնամքի արձակուրդից վերադարձը՝ 09.10.2019թ.:

Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի համաձայն կազմում է 175932 (հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ:

Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, հեռ (010) 543539, էլեկտրոնային փոստի հասցե (scws.qart@mail.ru):

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

•դիմում՝ Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի անունով (դիմումի ձևը կցվում է),

•տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ (ների), վկայական (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները,

•արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը կամ համապատասխան տեղեկանք,

•մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,

•սոցիալական քարտի պատճենը կամ հանրային ծառայության համարանիշի տեղեկանքը,

•անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ (հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 13ա) կամ էլեկտրոնային փոստի (scws.qart@mail.ru)միջոցով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 18 հոկտեմբերի 2018թ.:

Ջրային կոմիտեի գլխավոր

քարտուղարի պաշտոնակատար

պարոն Սամսոն Զատիկյանին

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

դիմողի հասցեն

դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով Ջրային կոմիտեի կողմից հրապարակված հայտարարությանը՝ խնդրում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 18/1-3.1-2) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով ինձ հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն ----
---

(ունեմ, չունեմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)
---

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ----------

(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4. Դատական կարգով հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից ----------

(զրկվել եմ, չեմ զրկվել)

5. Հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություններից որևէ մեկով ----------

(տառապում եմ, չեմ տառապում)

6. Հանցագործության համար ----------, չհանված կամ չմարված դատվածություն

(դատապարտվել եմ, չեմ դատապարտվել)

(ունեմ, չունեմ)

7. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, կրթական և ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)----------
---

(իրականացնում եմ, չեմ իրականացնում)

8. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ ----------

(զբաղվում եմ, չեմ զբաղվում)

9. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ ----------
---

(գտնվում եմ, չեմ գտնվում)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ ---------- ----------

ստորագրություն անուն, ազգանուն

------ ---------- 2018թ.